



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Սահմանադրության հրապարակ, 1 շենք, Հեռ. (+374 223) 2 36 63, 2 37 13, էլ.փոստ kotayk@mta.gov.am

07. 04. 2022թ.

ՇՆՈՐՀԱԿՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՅԿՈՒԹՅԱՆ ՏՈՒՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Միրելի՛ կանայք, մայրեր և քույրեր,

շնորհավորում եմ զարնանային ևս մեկ լուսավոր տոնի՝ մայրության և գեղեցկության օրվա կապակցությամբ ու մաղթում, որ մշտապես լինեք երջանիկ և որևէ պարագայում չխաթարվի Ձեր հանգիստն ու երջանկությունը:

Միրելիներս,

Մեզ հետ հավասար կիսելով դժվարություն, ցավ ու նաև ուրախություն՝ երբեք չեք տրտնջում, հակառակը՝ գոտեպնդում, ոգևորում և առաջ եք մղում:

Դուք պետության, ընտանիքի հենասյունն եք. ևս մեկ անգամ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ Ձեր մեծ նվիրումի, համբերության ու սիրո համար:

Առանձնահատուկ երախտագիտություն և խոնարհում հայրենիքին իրենց կյանքը նվիրած մեր տղաների մայրերին, քույրերին, կանանց:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՀԱՐՈՆ ՄԱՀԱԿՅԱՆ